չիւր ժողովուրդ, մինչև անգամ գերմանացիներից աւելի քիչ զարգացած, կարող է շուտ հասկանալ, թէ ինչ նշանակութիւն ունեն այդ անկախ անուանված թագաւորները, որոնք իշխան Բիսմարկի հլու հպատակներն են և որոնց կառավարութիւնները խոնարհութեամբ կատարում են Բերլինից ստացված հրամանները, թէպէտ այդ հրամաններին նրանք չեն համակրում, բայց կատարում են, որովհետև նրանց հրամայված է։ Թագաւորների այդ ակներև անզօրութիւնը, այն մարդկերանց լռութիւնը, որոնց առաջ մի ժամանակ խոնարհվում էին գերմանացիները, չափազանց տխրացնում է և վրդովում է վերջիններին։ Գերմանացիները դեռ ևս սիրում են իրանց թագաւորներին մանաւանդ իբրև դժբաղդ մարդկերանց, բայց իբրև միապետների նրանց բոլորովին չեն յարգում։ Կայսերական միապետութիւնը չէ փոխարինում գերմանացի անհատ ժողովուրդների միապետական զգացմունքները և դրա պատճառը շատ բնական է։ Ինչ որ վերաւորում է ժողովրդի ինքնասիրութիւնը, կարող է նրան երկիւղ ներշնչել և ստիպմամբ հնազանդեցնել, բայց չէ կարող նրա մէջ սէր և յարգանք ծագեցնել։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 3 յուլիսի 81.

Ներսէս պատրիարքը չը գիտեմ քանիերրորդ անգամուան համար իր հրաժարականը տուաւ անցեալ շաբաթ և ութ օր վերջը, երեկի օրը, դարձեալ ետ առաւ դայն։ Մարդաբէ պէտք չէ ըլլալ գուշակելու համար թէ խիստ մօտ ժամանակէ վերջը Ներսէսը դարձեալ պիտի հրաժարի իր պաշտօնէն։ Այսպիսի անհասկանալի մի եղելութեան իսկական պատճառները պէտք չէ որ անծանօթ մնան մեր ռուսաբնակ ազգայնոց և հասկանան վերջապէս թէ ինչ են այս տխրալի երևոյթին շարժառիթներն։

Կարելի է ասել թէ Կ. Պոլսի մէջ Ներսէսի նման ժողովրդի համակրութիւնը վայելող մի պատրիարք չէ եկած։ Ո՞չ մէկը չէ կարողացեր գուցէ զիտնալ իրեն չափ թէ ազգային էական շահերն որտեղ և ինչպէս պաշտպանուելու են։ Նա մի գործ է սկսած զոր գլուխ հանելու փափաքն ամենէն յառաջ ինքն պէտք է ղգայ հարկաւ։ Ինչու կը հրաժարի ուրեմն և այսպէս ոտէպ։

Ներսէս պատրիարքը մի տեղական հիւանդութեան ենթակայ է որ ամեն ժամանակ իբր բուն իր հրաժարման պատճառը յառաջ կը բերէ— բայց այդ հիւանդութիւնը, նոյն իսկ իր բժշկաց վկայութեամբը, չէ այնքան սաստիկ և յառաջացած որ թոյլ չը տայ իրեն գնել ազգին քաղաքական շահերուն վրա հսկել, և ունի բաւական անձնուիրութիւն մինչև իր վերջի շունչը աշխատելու համար։ Ներսէս քաջասիրտ է բաւական պաշտօնական պահանջմանց ականջ չը կախելու համար։ Նա լաւ գիտէ թէ, այսպիսի ժամանակի մէջ, երբ հայոց հարցը այնքան սերտ կերպով կապուած է իր անուանը հետ, ո՛րքան իր ասպարէզէն քաշուիլը կրնայ վնասել ազգին ապագային։

Այս բոլոր հանգամանաց մէջ երբ նա կը պնդէ կրկին թողելու ազգային վարչութեան ղեկը, և կուզէ հեռանալ այն ժողովրդէն որ յանհունս կը սիրէ և կը յարգէ իր անձը, այս բանին միմիայն և գլխաւոր պատճառներն են. ազգային ընդհանուր ժողովը և տէրութեան մօտ պաշտօն ունեցող ստրուկ պարոններն, որք էֆէնդի կը կոչուին։

Ազգային ընդհանուր ժողովը, որ աւելի ճիշտ կըլլայ ազգային պատուհաս անուանել, ձեզ գուցէ ծանօթ է թէ ինչպէս և որ անձերէ կազմուած է։ Սորա վրայ ուրիշ ատեն և մանրամասնաբար պիտի խօսիմ ձեզի։ Այդ ժողովը գլխաւորապէս երկու մասերէ կը բաղկանայ։ Մին մեծագոյն մասն ասուածն, թոյլ, ապիկար, անուս, որ և է միջոցներով վարկ ստացած անձինքնէ կազմուած մէկ խումբ, որք ոչ մէկ պրոգրամ չունին և ոչ մէկ հոծ մարմին կարող են կազմել հարկ եղած ատեն փոքրագոյն մասին դէմ դնելու համար։ Այս վերջինը կը բաղկանայ չուրջ 10 կամ 15 անձերէ, ոգէա և կոպիտ տիրացուներ, որք չը կարողանալով մի ընկերական վիճակ ունենալ հասարակութեան մէջ, ազգին գործերուն մէջ կը փնտրեն իրենց ամեն փառասիրութիւնն նա մանաւանդ շահերը։ Ամեն ընտրութեան ժամանակ դուռ դուռ կը շրջին քուէ մուրալու համար և ամեն կերպարանք կառնեն ժողովրդեան սիրտը շահելու համար։ Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր սոցա ըրած չարիքն չէ կարելի համառօտ կերպով պատմել։ Այժմ այսպէս ասենք թէ Ներսէսի աթոռն բարձրացած օրէն այդ խմբակը ուրիշ հոգ չունի եթէ ոչ նա հրաժարեցնել, կացութիւնը նորա անտանելի ընելով։ Ներսէսն իր նախորդներուն նման ոչ ձեռքերնին խաղալիք կարէ ըլլալ և ոչ իրենց խորհուրդին կը զիմէ որ և է ազգային գործ յառաջացնելու համար։ Այս կուսակցութեան պարագլուխներն են, աշխարհականաց կողմը, Ս. Փափազեան և Քրիստոսատուր անուն չահխնդիր և խառնակիչ վարժապետները, իրենց գաղտնի առաջնորդ ունենալով մէկ խորամանկ անձ որ ժողովին մէջ մեծ դիրք մը ունի։ Եկեղեցականաց կողմը կան Մատթէոս եպիս. Իզմիրլեան անուն փառասէրն, որ Մանկունի եպիսկոպոսին ներշնչմամբն և աջակցութեամբը պատրիարքական աթոռը կուզէ բարձրանալ և ուրիշ եպիսկոպոս որ նմանապէս փափաքող է պատրիարքական միթրի վրայ զետեղել իր իշխանական թագը, բայց ունի բաւական խորամանկութիւն խիստ յայտնի կերպով ցոյց չը տալու համար իր այս ցանկութիւնը։ Ներսէս պատրիարքն դիւրազգայ և իր արժանապատուութիւնը ճանաչող մի անձ է, ուրեմն սոքա կարող են դիւրութեամբ զզուեցնել զայն իւր կացութենէն, շարունակ դաւադրելով իրեն դէմ և անարգական ակնարկութիւններ ընելով իր երեսին։ Մեր ազգային ժողովի մէջ Եւրոպիոյ պարլամէնթներուն նման, ամեն մարդ ազատ է հարցապնդումներ (interpellation) ընել նախագահին, բայց անյարմար, կոշտ և վիրաւորեցուցիչ ձեւով։ Այս միջոցով էր ահա որ անցեալ շաբթու առանց պատճառի, առանց գրգռութեան, յարձակեցան նորէն նախագահին վրայ, որ չը կարենալով առաւել հանդուրժել հրաժարեցաւ անմիջապէս և դուրս ելաւ։ Ընդհանուր ժողովը նոյն օրը մի պատգամաւորութիւն յուղարկեց նրա մօտ որ ազաչէ շարունակել իր պաշտօնը։ Այս պատգամաւորութեան մասնակցեցան ի հարկէ այդ աղուէսներն ալ, իբր թէ պատրիարքին պաշտպաններէն են իրենք ալ։

Գանք էֆէնդի ըսուած պարոններուն։ Սոքա ամենքն ընդհանուր ժողովի անդամ չեն, բայց ամենքն ալ ոտքով գլխով ազգային գործոց մէջ են միշտ։ Սոքա այդ էֆէնդիներն են որք Ս.-Սթէֆանոյի դաշնադրութեան կնքուելու ժամանակ օրն երեք անգամ դաղտնի ժողովներ կընէին իբր թէ հայոց շահերուն աշխատելու համար, և որպէս զի, եթէ պատահմամբ շահաւոր բան մը ըլլայ հայերուն, իրենք նոցա հեղինակն հռչակուին և մէկ մէկ պաշտօն ստանան նորակազմ հանգամանաց շնորհիւ։ Կը կարծէին որ այն օրը թիւրքի վերջը եկած էր իսկապէս, ուստի ի հարկէ անկէ երես կը դարձնէին։ Ո՞րոնք էին այդ էֆէնդիներն և ուր կը ժողովէին, կըրնանք ցոյց տալ եթէ հարկ է։ Պերլինի դաշնադրութենէն վերջը տեսան որ թիւրքը տակաւին կեանք ունի և ուզեցին օգուտ քաղել և նորանոր պաշտօններ ստանալ։ Բայց թիւրքը լաւ հասկացած էր թէ այնուհետև որքան վստահութիւն պէտք էր ունենալ առհասարակ քրիստոնեայ պաշտօնեայներու վրայ և այն օրէն ի վեր պաշտօն, աստիճան, պատուանշան ամենայն ինչ մերժեցին այդ տարրին։ Այս ժամանակ հայ էֆէնդիները կարծեցին թէ հայոց հարցին երևան գալը և պատրիարքին արարքները միայն ցրտութիւն ձգեցին ազգին և կառավարութեան մէջ և սկսան ոչ միայն թիւրք նախարարներու մօտ նորա վարմունք պախարակել և ծաղրել, այլ և պատրիարքի երեսին ամեն ժամ յանդիմանութիւններ տեղացնել, ըսելով թէ նա ծուռ ճանապարհ է բռնած, թէ հայոց ազգն թիւրքին հետ բարեկամ ըլլալով կրնայ ամեն բարենորոգում ձեռք բերել, և միւս կողմանէ հայ ժողովրդեան այնպէս հաւատացնել ուզեցին թէ Հայաստանի հարստահարութեանց աւելնալուն պատճառը նոյն իսկ Ներսէսի վարմունքն էր տէրութեան հետ։ Զը գիտեմ թէ համարձակեցան ըսել նաև թէ Հայաստանի սովի պատճառն ալ Ներսէսն էր։ Հայ էֆէնդիներն, որ պատրիարքի մօտ կը մտնեն ամեն ժամանակ, շարունակ դայն կը յանդիմանեն այսպէս և դուրսը կը հալածեն։ Մարդ հրեշտակային համբերութիւն ունենալու է այսքան նենգութեանց տոկալու համար։

Այս էֆէնդիներուն մէջ աւելի երևան կեցողներն են, Ս. Ապրօ որ դրամական մի մշուշապատ պաշտօն ստանալէն ի վեր կառավարութեան երեսէն ինկած է, ինչպէս ինկած է և Ս. Համամճեան։ Յ. Նուրեան, վատահոգութեան և փառամոլութեան տիպարը։ Յ. Տաղեան, որ փաշայութեան աստիճան ստանալու համար ամեն մանտութեան կարող է։ Ս. Մաքսուդ անղդայ և չհամոզուող պետական սեղանաւորը։ Ա. Կօլօլեան, թիւրքաց կողմէն կարգուած դատարկագլուխ վաստաբանը և այլ մէկ քանի կուրթիզան էֆէնդիներ, պէյեր և փաշայներ, որոց անուններն և վայելուչ ածականներն յայտնի են։

Կը հարցունեմ ձեզ, երբ բոլոր այս բորենիները կերթան չարունակ զպատրիարքը Բ. Դուռը, պալատը վատահամբաւելու և հայերը բոլորովին թիւրքաց քաղաքականութեան համակիր ցոյց տալով, զայն միայն մեղադրա յայտնելու. երբ խորհուրդ կը տան թիւրք պաշտօնեայներու որ պատրիարքական խնդիրքները չը կատարեն, երբ կերթան թիւրք մամուլը նորա դէմ գրգռելու, կարելի է մէկ մարդու համբերել, մընալ և գործել։

Ուրեմն Ազգային ժողովը և հայ էֆէնդիներն են որք պատրիարքի կացութիւնը անտանելի ըրած են, և որքան որ այս անգամ դարձեալ հրաժարական յետ առաւ, քիչ ատենէն նորէն պիտի ստիպուի քաշուելու «արիւն ձեր ի գլուխս ձեր» ըսելով։ Ազգային ժողովն և էֆէնդիներու խումբը միշտ աւելի վնաս հասուցեր են ազգին քան թէ բարիք։ Ժողովուրդն լաւ կը գնահատէ իւր պատրիարքն, ինչ օգուտ որ սորա գործը առջիններուն հետ է։ Մի ահեղ երդումով պատրիարքը կաշկանդուած է և չէ կարող իր երդման դէմ մեղանչել ցաւելով այդ ժողովը որպէս զի գործէ այս ճգնաժամի մէջ ինչպէս որ կամի։ Սակայն մօտ է օրը որ ժողովուրդը հաչիւ պիտի պահանջէ իր ներկայացուցիչներէն, վասն զի լիքն է բաժակը։ Մինչև այն ատեն պէտք է որ ընդհանուր ժողովին մեծամասնութիւնը, եթէ յիրաւի կը սիրէ ազգին շահերը և կուզէ պատրիարքի մնալը, խմբովին հրաժարական տայ, որպէս զի ժողովն ինքնիրեն լուծեալ համարուելով մէկ քանի ամիս հանդարտ ըլլանք մինչև նոր երեսփոխանաց ընտրութիւնը։ Այժմեան պօռոտախօսներու կլուբը իր անգոյութեամբ միայն կրնայ ծառայել ազգին։ Ժողովրդեան ճիշդ կարծիքը յայտնեց մի պանդուխտ հանդիսական երէկի ժողովքի ատեն, երբ ամենքը «խօսք կուզեմ» ըսած ատեններն բացականչեց «Բաստ և մէկ տարի է խօսք կուզէք, գործ երբ պիտի տեսնէք»։

Եւ բոլոր այս բաներուն պատճառ այն անանախատես սահմանադրութիւնն է որ ժողովուրդը չը պատրաստած, Միացեալ Նահանգաց նման նորա ընտրողական մէկ իրաւունք տուաւ։ Այս աստիճան անսահման ընտրողական մէկ դրութիւն չարիք մըն է ազգին, վասն զի տակաւին պէտք ունէինք մնք վայելելու բարեխառնեալ նահապետական դրութեամբ մէկ վարչութիւն։

Իսկ էֆէնդիներուն գալով, նոքա այնքան քսու և մատնիչ են, որքան վախկոտ։ Կը բաւէ որ մէկ քանի անգամ հրապարակաւ յայտնուի նոցա արարքն, և օրագիրք, փոխանակ նոցա գործիք ըլլալու, յականէ յանուանէ մատնանիշ ընեն նոքա ազգին։ Նոքա այնքան վատ են և ըսկզբունքնին այնքան խախուտ որ դժուար չէ փչրել մէկ հարուածով բոլոր նոցա կարուցած նենգաւոր սիւներն։

Օրագիր ըսելով ի հարկէ պէտք չէ հասկնանք Կ. Պոլսի հայ թերթերը, որք այս վերջի միջադէպին մէջ ցոյց տուին որքան առանց ըսկզբունքի և չողոքորթ ըլլալնին, բացի «Մանզումէէն»։ Երևակայեցէք որ սոքա ութը օրվան միջոցի մէջ, երբ ժողովուրդը յուզված էր և կը վախնար սաստիկ որ մի գուցէ իր սիրելի պատրիարքէն զրկուի, օրագիրք ոչ միայն չը պաշտպանեցին զայն յայտնապէս, այլ և ծածկել ուզեցին նորա հրաժարականին բուն իսկ շարժառիթները, այլ և արգելք ըլլալ ուզեցին որ ժողովուրդը հաղարաւոր ստորագրութիւններ հաւաքէ նորա մնալը թախանձելու համար։ Կարծեցին թէ այս անգամ անդառնալի էր Ներսէսի որոշումը և չուզեցին անհաճելի երևիլ ոմանց։ Նոքա պատրաստ էին ինկարկելու նորընտիր պատրիարքին, այս պատճառաւ չափազանց գովասանութիւններ չըրին ելնողին։ Փոխանակ պախարակելու Ներսէսի յայտնի և գաղտնի թշնամիները, փոխանակ ցոյց տալու այն ամեն երեսփոխանները որք իրենց յանձնուած պաշտօնը այսպէս վատաբար և ագդավնաս կերպով կը գործածեն, լաւագոյն համարեցան այդ հրաժարման պատճառը ուրիշ տեղ փնտռել։ Մէկ թերթ լրբացաւ իսկ ըսելու թէ թիւրք օրագրաց յարձակումներուն պատճառաւ է որ հայոց պատրիարքը կը հրաժարի։ Ով որ գիտէ թէ ինչ է թիւրք մամուլը, որու մէջ դժբաղդաբար հայ խմբագիրներ ալ կան, կրնայ հասկանալ թէ ասկէ աւելի նախատական խօսք կարելի չէր ընել Ներսէսին։

Այս դէպքի վրայ հարկ համարեցայ երկարօրէն պնդել գլխաւորապէս երկու պատճառի համար։ Նախ՝ կրկին և կրկին ցոյց տալու համար թէ Կ. Պոլսի գլխաւոր գործիչներն որպիսի անձեր են, խեղճ ժողովուրդը որոց ձեռք խաղալիք եղած է, և երկրորդաբար երևան հանելու համար թէ հայոց ազգը, նա մանաւանդ գաւառացին պէտք չէ մէկ բան սպասէ սոցա նման մարմիններէ։ Իսկ ձեր մէջ, եթէ տակաւին կան այնպէս անձեր որ մեծ համարում ունին Կ. Պոլսի ազգային ժողովին վրայ և հանգիստ կը ննջեն կարծելով թէ այստեղ հայոց հարցի մասին Ներսէսէ զատ աշխատող կայ ազգու կերպով, պէտք է որ փոքր ինչ նոցա սրտին անդորրութիւնը բարեխառնի և մտածեն առաւել խեղճ թիւրքիարնակ գաւառացիին ապագան ապահովելու կերպերուն վրա, առանց Կ. Պոլսի գործիչներու միջնորդութեան։

Հ. Ֆ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տելեֆոնը արդէն Զինաստանում ևս մուտք է գործել։ Ցայտնի է, որ չինական լեզուն չունի այբբենարան և որ չինացիք գրելու համար գործ են ածում հաղարաւոր զանազան պատկերներ, որոնց իւրաքանչիւրը իր նշանակութիւնն ունի։ Այդ պատճառով շատ դժուար է այս լեզուին յարմարեցնել սովորական հեռագրական սիստեմը։ Զինաց կառավարութիւնը հասկացաւ, որ ինքն կարող է տելեֆոնից քաղել այն, ինչ որ չէր կարելի սպասել հեռագրից, և այդ պատճառով նա կարգադրեց չինել տէլէֆոնեան գծեր։ Այդ գործի հսկողութիւնը յանձնված է ամերիկական ինժեներին։ Առաջին գծերը կանցկացնվեն Եամտուի—Կիեանդում։

* * *

«Մասիս» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Յաւով կը լսենք թէ անգլօ-ֆրանսական «Մէոէնճը» լրագիրը պետական դատաստանին վերաբերեալ տեղեկութիւններ հրատարակած լինելուն պատճառաւ խստաս խափանուեր է Բ. Դրան հրամանաւ։

* * *

Թիւրքաց Հայաստանից մեզ գրում են։ «Մուշի կողմերում այս տարի հացաբոյսերի շատ մեծ առատութիւն է։ Վանի և Մուշի սանջակներում զպրոցների թիւը շատ աննշան է. ժողովուրդը ուսման փափագ ունի, բայց ուսում տուող չը կայ։ Վանի մէջ Հայաստանի աշխարհագրութիւնից հրապարակական դասերը շատ լաւ են առաջ գնում, միայն ժողովրդի ամեն դասակարգերը միջոց չունեն ներկայ գտնվելու այդ դասախօսութիւններին։ Թիւրքաց կառավարութիւնը սարսափով է նայում ուսման տարածվելու վրա հայոց ազգաբնակութեան մէջ։»

* * *

«Մասիս» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Վեհ. սուլթանն յանձնախումբ մը նշանակեց բարենորոգմանց ծրագիր մը պատրաստելու համար ըստ 61-որդ յօդուածոյ Բերլինի դաշնագրոյն, որ Արմենիոյ վարչութեան կը վերաբերի։ Այդ ծրագիրը տէրութեանց պիտի ներկայացվի, և Բ. Դուռը նախաձեռնութիւն պիտի ունենայ բարենորոգմանց ներմուծման գործին մէջ։ Ցոյսեր կը յայտնվին թէ սուլթանը տեսակ մը բարենորոգման ծրագիր հրատարակել պիտի տայ ընդհանուր գաւառաց վարչութեան համար նպատակ ունենալով առաջն առնուլ Եւրոպիոյ դիւանագիտական միջամտութեան։ Օսմանեան նախարարութիւնը երէկ հայաբնակ գաւառաց մէջ մըցուելիք բարենորոգմանց խնդրոյն զբաղեցաւ։ Նոր ծրագիր մը պատրաստ է, որ կայսերական իրադէով վաւերանալէ յետոյ, մեծ պետութեանց պիտի հաղորդվի։»

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ